

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԱՍԱ- ՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

I

Յայտնի է, որ պատմական զանազան շրջաններում մարդ-
կային հասարակութիւնների մէջ տիրել են տարբեր քաղաքա-
կան ձևեր, կամ քաղաքական սխտեմներ: Այդ սխտեմների փո-
փոխութիւնները, նրանց աստիճանական զարգացումը միշտ
համապատասխանել և հետևել են հասարակութիւնների ներքին
սոցիալական կեանքում կատարուող փոփոխութիւններին ու
զարգացմանը: Մարդիկ, միշտ և ամեն տեղ ենթարկուած լի-
նելով գոյութեան կռուի անողոր օրէնքին, աշխատում են ան-
ընդհատ գիտակցաբար և անգիտակցաբար զարգացնել իրանց
արդիւնազործական ոյժերը (Produktivkräfte): Նայած այդ ար-
դիւնազործական ոյժերի դրութեան, ուրիշ խօսքով, նայած այն
բանին, թէ ի՞նչ միջոցներով, կամ գործիքներով և ի՞նչ ձևով
են մարդիկ զանազան ժամանակներ հայթհայթել իրանց ապ-
րուստը, արդիւնազործել իրանց գոյութեան համար անհրա-
ժեշտ բարիքները, հասարակութեան մէջ զանազան ժամանակներ
տիրել են տարբեր արդիւնազործական յարաբերութիւն-
ներ (Produktionsverhältnisse) տարբեր դասակարգային քաժա-
նումներ (Klassengliederung): Այդ դասակարգերի փոխադրեցու-
թիւնը, նրանց անխուսափելի կռիւը միմեանց դէմ կազմել են
միշտ համապատասխան պատմական շրջանների բովանդակու-
թիւնը և պայմանաւորել են, վերջին հաշուով, քաղաքական
կազմակերպութեան այս կամ այն ձևի տիրապետութիւնը:

Այդ պատճառով, որեւէ պատմական շրջան կամ քաղաքա-
կան սխտեմ լաւ հասկանալու համար, անհրաժեշտ է ամենից
առաջ ծանօթանալ այդ շրջանում տիրող արդիւնազործական
սխտեմի և հասարակութեան դասակարգային կազմի հետ: Յու-
նական ու հռոմէական անտիկ քաղաքական կազմը յենում էր
ամբողջովին այն ժամանակ տիրող ստրկական տնտեսութեան
վրայ, և հնադարեան պատմութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ

այն ժամանակ գոյութիւն ունեցող երկու գլխաւոր դասակարգերի՝ ստրուկների և ազատների, նրանց դասակարգային կրօնների պատմութիւնը: Միջնադարեան ֆէօդալական պետութիւնը կարելի է հասկանալ նոյնպէս միմիայն աչքի առաջ ունենալով այդ ժամանակուայ արդիւնագործական սխտեմը՝ մանր գիւղացիական և արհեստաւորական արդիւնագործութիւնը և միջնադարեան դասակարգերի՝ գլխաւորապէս հողատէր-ազնուականութեան և ճորտ-գիւղացիութեան յարաբերութիւնները:

Ժամանակակից քաղաքացիական, կամ բուրժուական պետութիւնն էլ (etat civil, bürgerlicher Staat), ունի իր յատուկ արդիւնագործական սխտեմը և իր յատուկ դասակարգային բաժանումը: Այդ սխտեմը, ինչպէս յայտնի է, կապիտալիստական արդիւնագործութիւնն է, իսկ այն դասակարգերը, որոնց փոխադրեցութիւնը լցնում է ժամանակակից եւրոպական պետութիւնների ամբողջ սոցիալական ու քաղաքական կեանքը, կազմում են գլխաւորապէս բուրժուազիան և պրոլետարիատը:

Ներկայ տեսութեան նպատակներից դուրս է՝ խօսել կապիտալիստական արդիւնագործութեան եղանակի մասին: Մենք կը զբաղուենք այստեղ երկրորդ խնդրով. կը փորձենք ընդորշել մի քանի ընդհանուր գծերով, ժամանակակից դասակարգերի պատմական ծագումը և նրանց ներկայ վիճակը:

Մենք կը սկսենք պրոլետարիատից, որ ներկայիս ամենաստորին և ամենաուշագրաւ դասակարգն է:

Բայց նախ մի քանի խօսք ընդհանրապէս ժամանակակից հասարակութեան դասակարգային կազմի մասին:

Ժամանակակից բուրժուական հասարակութեան մէջ աչքի են ընկնում ամենից առաջ, ինչպէս ասացի, երկու մեծ դասակարգեր. կապիտալիստ դասակարգը կամ բուրժուազիան և պրոլետարիատը: Բայց կայ և մի ուրիշ բաւական մեծ դասակարգ, որ միացորդ է նախկին ֆէօդալական շրջանից, բայց բաւական նշանաւոր դեր է կատարում ժամանակակից հասարակական-քաղաքական կեանքում: Այդ՝ ազնուական կամ հողատէր դասակարգն է: Ո՞րոնք են այդ երեք դասակարգերի յատկանիշները, ի՞նչն է, որ այդքան խիստ ու որոշ կերպով բաժանում է միմիանցից այդ դասակարգերը և այդքան ուժեղ անտագոնիզմ ու երբեմն այդքան կատաղի կրօն է առաջացնում նրանց մէջ:

Հողատէր դասակարգի գոյութեան աղբիւրը կազմում է, ինչպէս յայտնի է, նրա հողային կամ կալուածային հասոյթը (Grundrente): Դրամատէր կամ կապիտալիստ

դասակարգը ապրում է իր կապիտալի շահով (Profit), իսկ բանուոր դասակարգը՝ իր ստացած աշխատավարձով: Ահա թէ ինչն է, որ տարբերում է բաժանում է միմեանցից այդ երեք դասակարգերը: Բայց այդ դեռ բաւական չէ. բաժանելուց յետոյ նա միեւնոյն ժամանակ հակադրում է միմեանց այդ դասակարգերը և անխուսափելի կերպով կռիւ է առաջացնում նրանց մէջ: Հողատէրը իր հասոյթները ստանում է կապիտալիստից և բանուորից: Առաջինին՝ նա հող է տալիս՝ տուն և գործարան շինելու համար. երկրորդին՝ տուն է տալիս բնակուելու համար: Այդպիսով նա խլում է՝ կապիտալիստից՝ նրա շահի մի մասը և բանուորից՝ նրա աշխատավարձի մի մասը: Ձգտելով աւելացնել կամ գոնէ պահպանել իր արդիւնքները, հողատէրը ակամայից ընդհարւում է միւս երկու դասակարգերի շահերին: Կապիտալիստն էլ իր կողմից ամենայն իրաւամբ պաշտպանելով իր շահերը, աշխատում է որքան կարելի է քիչ հասոյթ տալ հողատէրին և քիչ աշխատավարձ բանուորներին. իսկ բանուորները աշխատում են, որքան կարելի է շատ աշխատավարձ ստանալ կապիտալիստից և որքան կարելի է քիչ վրճարել հողատէրին: Այդպիսով ամբողջ ազգային եկամուտը (Nationaleinkommen) ներկայ հասարակութեան մէջ բաժանւում է երեք դասակարգերի մէջ, և մի դասակարգի արդիւնքները աճումը անհրաժեշտօրէն նշանակւում է միւս դասակարգերի արդիւնքների նուազումը: Ահա այդ հանգամանքն է, որ հակառակ բարեխիտ ու խաղաղասէր մարդկանց «ազգային» քարոզներին, անհրաժեշտ և անխուսափելի է դարձնում ներկայումս ամեն մի ազգի մէջ առանձին դասակարգերի փոխադարձ կռիւը, — կռիւ՝ յանուն որոշ բաժնի՝ ազգային եկամուտի մէջ:

Բայց այդ կռուի մէջ բոլոր դասակարգերի շահերը, նւրանց յաղթութեան կամ պարտութեան գրաւականները միատեսակ չեն: Կռուի և յաջողութեան գլխաւոր զէնքը արդիւնագործութեան միջոցներն են (Produktionsmittel) ներկայումս՝ հողը և կապիտալը, որ պատկանում են սեփականատէր դասակարգերին, ազնուականութեանը և բուրժուազիային. մինչդեռ պրոլետարիատը, գուրկ լինելով ամեն սեփականութիւնից, կռուի ասպարէզ է մտնում առանց որեւէ զէնքի, ապաւինելով միմիայն իր բազումների ոյժին: Պարզ է, որ յաղթութիւնը պէտք է լինի ուժեղի կողմը, և որ պարտուողը և տուժողը՝ ներկայ պայմաններում, պէտք է լինի բանուոր դասակարգը: Եւ հէնց այդ է, որ ցոյց է տալիս մեզ ամբողջ ժամանակակից եւրոպական իրականութիւնը: Ամեն տեղ մենք տեսնում ենք, որ սեփականատէր դասակարգերը անսահ-

ման իշխում են պրոլետարիատի վրայ: Ամեն տեղ պետական մարմինները, ամբողջ օրենսդրութիւնը, բոլոր հասարակական-իրաւական հիմնարկութիւնները ծառայում են բուրժուազիայի ձեռքին իբրեւ ղէնք՝ նուիրագործելու մասնաւոր սեփականութեան «սրբազան» ու «անձեռնմխելի» իրաւունքը, ամբացնելու և յաւերժացնելու կապիտալիստական շահագործութեան հրէշաւոր հիմունքները:

Ինչպէս է ստեղծուել իրերի այդ դրութիւնը և ինչ ազդեցութիւն ունի նա ժամանակակից ժողովուրդների կեանքի վրայ,—այդ ցոյց կը տայ մեզ առանձին դասակարգերի պատմութիւնը և նրանց վիճակը՝ ներկայ հասարակութեան մէջ: Այս առաջին յօդուածում մենք կը խօսենք, ինչպէս առացինք, յատկապէս պրոլետարիատի մասին: Մենք չենք շօշափի այստեղ այն բոլոր խնդիրները, որ կապուած են այդ դասակարգի աճումնաւնի և գոյութեան հետ, չենք կարող խօսել նրա պատմական միաստիայի, նրա դասակարգային կռուի և այդ կռիւն ղեկավարող քաղաքական կուսակցութեան մասին, և այլն: Մենք կանգ կ'առնենք միայն, համառօտ կերպով, նրա ծագման պատմութեան վրայ և կը ներկայացնենք, կրկնում ենք, մի քանի ընդհանուր գծերով, նրա վիճակը, նրա գոյութեան նիւթական պայմանները ներկայ հասարակութեան մէջ:

II

Պրոլետարիատի ծագումը անբաժան կերպով կապուած է բուրժուազիայի, խոշոր արդիւնաբերութեան, առ հասարակ ամբողջ ժամանակակից հասարակութեան ծագման հետ: Միջին դարերում, ֆէօդալական հասարակութեան մէջ, որի արգանդում ծնունդ է առել ժամանակակից բուրժուական հասարակութիւնը, — ինչպէս յայտնի է, շատ աննշան դեր էին կատարում արհեստը և վաճառականութիւնը: Եւրոպական ժողովուրդների գոյութեան գլխաւոր աղբիւրը հողն էր և հողագործութիւնը. (և հէնց այդ էր պատճառը, որ հողատէր, կամ ազնուական դասակարգը այնքան մեծ ոյժ էր ներկայացնում միջին դարերում): Ժամանակի ընթացքում, թէ արհեստները և թէ վաճառականութիւնը աւելի ու աւելի զարգանում էին: XIV և XV դարերի ընթացքում տեղի ունեցան մի շարք համաշխարհային ղէպքեր, որոնք արմատապէս յեղափոխեցին եւրոպական ժողովուրդների կեանքը: Այդ ղէպքերն էին. 1) նաւագործութեան ուժեղ զարգացումը և կողմնացոյցի գիւտը, որ հնարաւորութիւն տուեց եւրոպացիներին դուրս գալ ազատ

ծովը և նոր երկիրներ փնտռել նրա խորքերում. 2) Ամերիկայի գիւտը, որ մի նոր ընդարձակ շուկայ բացեց եւրոպական վաճառականութեան համար և որտեղից անհուն բանականութեամբ ոսկի և արծաթ հոսեց դէպի Ներոպա. 3) ծովային ճանապարհի գիւտը դէպի Հնդկաստան, որ հնարաւորութիւն տուեց եւրոպացիներին փոխանակ ցամաքով, ուրիշ ազգերի միջնորդութեամբ ու թանկ գնով ստանալու այնտեղի ապրանքները, անմիջական վաճառականական յարաբերութիւններ սկսելու այդ երկրի հետ. 4) վառօդի և հրաձիգ զէնքերի գիւտը, որ հնարաւորութիւն տուեց, մի կողմից՝ հեշտութեամբ տիրանալու նոր գտած երկրներին, և միւս կողմից՝ սանձաւարելու ֆէօդալական իշխանների կամայականութիւններն ու աւագակութիւնները և ուժեղ կենդրոնական իշխանութիւն ստեղծելու եւրոպական երկրներում: Դրանց պէտք է աւելացնել թղթի և տպագրութեան գիւտը և այլն:

Այդ բոլոր գիւտերը մինչև հիմքերը ցնցեցին եւրոպական ժողովուրդների տնտեսական կազմը և միանգամայն կերպարանափոխեցին նրանց ամբողջ կեանքը: Վաճառականութիւնը ըսկըսեց զարգանալ հսկայական քայլերով: Հողի, այդ «անշարժ կայքի» կողքին, որը մինչև այդ միակ արդիւնաբերութեան միջոցն էր, երևան եկաւ և սկսեց դեր կատարել մի նոր արդիւնաբերութեան միջոց. «շարժական կայքը»՝ փողը: Բայց նոր երկրներից և նոր հարստութիւններից կարող էր օգտուել, պարզ է, միայն ունեւոր դասակարգը, վաճառականութիւնը, որը հնարաւորութիւն ունէր սեփական նաւեր ձեռք բերելու և ճանապարհորդելու դէպի այդ հեռաւոր երկիրները: Այդպիսով նախկին հողատէր դասակարգի կողքին ծնունդ առաւ մի նոր ուժեղ փողատէր դասակարգ, որը ժամանակի ընթացքում սկսեց կրել մեզ յայտնի բուրժուազիա անունը: Մինչև այդ վաճառականութիւնը, ինչպէս յայտնի է, միջնորդի դեր էր միայն կատարում, միջնորդի՝ արդիւնաբերողի և սպառողի միջև: Վաճառականութիւնը՝ բառի բուն նշանակութեամբ՝ առ և տուր էր: Իսկ այժմ նրա առջ բացւում էր մի նոր ասպարէզ, եւրոպական մանր արդիւնաբերողները, գիւղացին և արհեստաւորը, անկարող էին այնքան ապրանք արդիւնաբերել, որով կարելի լինէր բաւարարութիւն տալ նոր բացուած ընդարձակ շուկաներին: Վաճառականները, որոնք իրանք ամենից լաւ ճանաչում էին այդ շուկաների պահանջները և իրանց ձեռքին եղած ահագին զրամական միջոցներով հնարաւորութիւն ունէին աւելի խոշոր արդիւնաբերութիւն սկսելու, բնականօրէն պէտք է իրանք ձեռնարկէին այդ գործին: Նրանք սկսեցին գործարաններ հիմնել

և հիմք դրին այդպիսով խոշոր մասսայական արդիւնաբերութեան:

Բայց այդ տեսակ արդիւնաբերութեան համար հարկաւոր էին աշխատող ձեռքեր: Կեանքը արդէն հոգացել էր այդ մասին և պատրաստել էր այն տարրը, որից պէտք է օգտուէին կապիտալիստները: Այդ՝ սաստկացած մրցման, փողային տնտեսութեան առաջ բերած յեղափոխութեան անմեղ զոհերն էին, իրանց կտոր հողից և տնտեսութիւնից զրկուած նախկին մանր արդիւնագործները: Զուրկ առնն բանից և օժտուած միմիայն բնատուր ֆիզիքական ոյժով, աշխատելու ընդունակութեամբ, նրանք թափուեցին այդ գործարանները, որպէսզի, ծախելով իրանց բանուորական ոյժը, կարողանան պահպանել իրանց գոյութիւնը: Այդպիսով ծնունդ առաւ մեղ զբաղեցնող պրոլետարիատը, այն դասակարգը, որը, ինչպէս արդէն գիտենք, ոչ մի սեփականութիւն չունի և ապրում է միայն կապիտալիստներից ստացած աշխատավարձով:

Սկիզբներում այդ տեսակ սեփականագուրկ մարդկանց թիւը քիչ էր, և բաւարարութիւն չէր տալիս արդիւնաբերութեան պահանջներին: Բայց նոյն «կեանքը» նորից օգնութեան հասաւ կապիտալիստներին: Փողային տնտեսութեան զարգացումը քաղաքներում և այդ քաղաքների հսկայական աճումը ազդեցութիւն ունեցան նաև գիւղական տնտեսութեան վրայ: Քաղաքները պահանջում էին հում նիւթ, փայտ, բուրդ, վուշ և այլն: Այդ բանի շնորհիւ գիւղական արդիւնագործութիւնը հետըզհետէ աւելի ու աւելի դառնում էր ապրանքային արդիւնագործութիւն, այսինքն արդիւնագործութիւն, որը նշանակուած է ոչ թէ սեփական անմիջական կարիքներին բաւարարութիւն տալու, այլ վաճառելու և փող վաստակելու համար: Փողը մուտք գործեց այդպիսով և սկսեց դեր կատարել նաև գիւղական կեանքում: Այդ հանգամանքը, նկատում է Կառլսկին, մի կատարեալ դժբախտութիւն էր գիւղացիների համար: Փողը գրգռում էր նրանց կեղեքիչների՝ հողատէրերի և կառավարութեան ագահութիւնը: Եթէ մինչև այդ բնական տնտեսութեան ժամանակ նրանք վճարում էին իրանց հարկերը աւելորդ բնական բերքերով, նրանք պէտք է վճարէին այժմ փողով: Բնական բերքերից կարելի էր վերցնել միայն այնքան, որքան կարելի էր անմիջապէս սպառել, իսկ փողի համար, ի հարկ է, ոչ մի սահման գոյութիւն չունի: Եւ այդ ժամանակուանից գիւղացուն սկսեցին անխնայ կողոպտել: Վերցնում էին նրանից ոչ միայն այն, ինչ որ մնում էր նրա գրպանում անհրաժեշտ կարիքները հոգալուց յետոյ, այլ բոլորը, ինչ որ

կարող էին: Գիւղացիների ընտանիքները և տնտեսութիւնները սկսեցին արագ քայքայուել: Մի քանի յուսահատ ճիգերից յետոյ, հաւաքական դիմադրութեան, փորձիկ ապստամբութիւնների անհետեանք փորձերից յետոյ, նրանք ստիպուեցին թողնել իրանց տուն-տեղը և փախչել դէպի քաղաքներ:

Դրան աւելացաւ և մի ուրիշ հանգամանք: Նոր, լայնացած շուկաներին բաւարարութիւն տալու համար քաղաքներում սկսուած խռոշ, մասսայական արդիւնագործութիւնը անհրաժեշտ դարձրեց նոյն տեսակ խռոշ արդիւնագործութիւն նաև գիւղական տնտեսութեան մէջ: Հողատէրերը, ագնուականները, փորձեցին գիւղերում անել նոյնը, ինչ որ վաճառականները անում էին քաղաքներում: Աշխատաւոր ձեռքերի պակասութիւն չէին գտնւում: Ծորտ գիւղացիների բազմութիւնը ամբողջովին նրանց տրամադրութեան տակ էր: Հողագործութիւնից ագնուականները սկսեցին անցնել անասնապահութեան և անտառային տնտեսութեան, որպէսզի քաղաքների համար բուրդ և փայտ արդիւնաբերեն: Այդ նոր գործի համար նրանց մինչև իսկ աւելի քիչ էին հարկաւոր աշխատաւոր ձեռքեր, քան մինչև այդ՝ հողագործութեան համար: Բայց դրա փոխարէն նրանք սաստիկ կարիք էին գտնւում նոր ազանի նողերի՝ անասնապահութեան համար:

Այստեղ բացուած է մեր առաջ պատմութեան անեղ ու արիւնալի էջերից մէկը, որ յայտնի է սկզբնական ակումուլացիա՝ հարստութիւնների կուտակումն՝ անոնով, և որ այնպիսի վարպետութեամբ նկարագրել է Մարքսը իր անմահ «Կապիտալ» մէջ^{*)}: Իրանց այդ հողի կարիքը լրացնելու համար, ագնուական-կալուածատէրերը մի բարձրարոտական անգթութեամբ սկսեցին հալածել իրանց գիւղացիներին, քանզի նրանց օջաղները, աւերել ամբողջ համայնքներ, քշել գիւղացիներին իրանց դարաւոր բնակավայրերից, որպէսզի իւրացնեն այդպիսով ազատուած հողերը: Սաբերայութիւնը, թալանը, աւազակութիւնը, հրդեհաձգութիւնները և բռնութիւնը՝ իր բոլոր տեսակներով, գործում էին գիւղացիների դէմ անսահման վայրագութեամբ: Եւ այդ սոսկալի ոճրագործութիւնները, որ կատարում էր իշխող ու արտօնեալ փոքրամասնութիւնը՝ ազգաբնակչութեան իրաւագուրկ մեծամասնութեան դէմ, շարունակում էին XVI դարից սկսած՝ մինչև XVII դարի վերջերը: Կառավարութիւնները հւրոպական բոլոր երկրներում, որոնք, եթէ հաւատանք պիտական իրաւունքի թէօրեոթիկներին, բարձր են կանգնած

*) «Kapital» հատ. 1, գլուխ վերջին:

բոլոր դասակարգերից և կոչուած են պաշտպանելու արդարութեան սկզբունքը դասակարգերի փոխադարձ յարաբերութիւններէ մէջ ու հոգալու ընդհանուր ըրարօրութեան համար,— ոչ միայն չէին դիմադրում ազնուականութեան այդ բարբարոսութիւններին, այլ, ընդհակառակը, ամեն կերպ նպաստում էին նրանց՝ իրանց հեղինակաւոր միջամտութեամբ։ Մարքսը, խօսելով անգլիական գիւղացիութեան էքսպրոպրիացիայի մասին, մի շարք վերին աստիճանի պերճախօս պատմական դոկումենտներով, կայսերական և պարլամենտական օրէնքներով ու կարգադրութիւններով, ցոյց է տալիս, թէ ի՞նչ սոսկալի դեր է կատարել այդ խնդրում անգլիական կառավարութիւնը։ Մի կողմ թողած եկեղեցական կալուածների և պետական հողերի անամօթ կողոպուտը, որ կատարուել է ազնուական կալուածատէրերի կողմից՝ կառավարութեան անմիջական աջակցութեամբ լէնդլորդները 1801 թուից մինչև 1831-ը պաշտօնապէս խել են գիւղացիներից 3,511,770 տէր համայնական հող և պարլամենտական ճանապարհով՝ նուիրել են իրանք իրանց, քանից մի կողմէ կարծաւորութիւն տալու կողոպտուած գիւղացիներին*)։ Մինչդեռ վաճառականները հարստութիւններ էին դիզում թաւանելով ու աւերելով նոր գտած երկիրները՝ եւրոպական դաղութները, ֆէօդալական ազնուականութիւնը թաւանում և կողոպտում էր իր սեփական հպատակներին։ Ինչպէս առաջինները, նոյնպէս և այդ վերջինը կանգ չէ առնում ոչ մի միջոցի առաջ։ Եւ այդ բոլորի հետեանքը եղաւ այն, որ երկիրը լցուեց անտուն ու անտէր, գոյութեան ամեն տղրիւրից զրկուած, թշուառ բաղմութիւններով։ Աղքատութիւնը, սովը, աւազակութիւնը թագաւորեցին մասսաների մէջ։ Սյդ մասսաներից շատերը ուղեւորուեցին դէպի քաղաքները գործ ու աշխատանք գտնելու յոյսով։ Նրանք դարձան այդպիսով այն պակասը, որ զգում էին մինչև այդ՝ կապիտալիստները։

Այդպէս ստեղծուեցին հողազուրկ, սեփականազուրկ, «թուչունի նման աղատ» պրոլետարների լեգէօնները։ «Ժամանակակից կապիտալիստական արդիւնաբերութիւնը, ասում է այդ առիթով Կարլ Կաուցկին, ստեղծուեցաւ ընդէքսպրոպրիացիայի միջոցով, մի այնպիսի կատաղի ու արիւնահեղ յեղափոխութեամբ, որի նմանը դեռ չէր տեսել համաշխարհային պատմութիւնը։ Ի հարկէ այդ յեղափոխութիւնը հարուստների և ուժեղների յեղափոխութիւն էր, ուղղուած՝ թոյլերի ու աղ-

*) Ibid.

բառերի դէմ, և այդ պատճառով այն դարեշրջանը, երբ կատարուում էր այդ յեղափոխութիւնը, հռչակուած է պատմաբաններին կողմից, որպէս հումանիզմի և մտքերի ազատագրութեան դարեշրջան: Ներկայումս ամենից շատ գոռում են այդ մասին նրանք, որոնց վրայ սարսափ են ազդում պրոլետարիատի յեղափոխական ձգտումները: Բանուորական մասսաների էքսպրոպրիացիան, նրանց անշատուժը սեփական արդիւնագործութեան միջոցներից, նրանց պրոլետարականացումը, անհրաժեշտ նախապայմանն էր կապիտալիստական մասսայական արդիւնագործութեան, բայց ինչպէս միշտ, նոյնպէս և այս դէպքում, առաջաւոր դասակարգերը չբաւականացան պատահի, հանդիսատես դերով իրանց աչքի առաջ բնական անհրաժեշտութեամբ կատարուող վարձացման վերաբերմամբ: Նրանք դիմեցին ոյժի օգնութեան՝ իրանց շահերը պաշտպանելու և այդ վարձացման պրոցեսը արագացնելու համար: Կապիտալիստական հասարակութեան ծնունդու ժամանակ նրա մանկաբարձուհին ընդունութիւնն էր՝ իր ամենատգեղ և վայրենի ձեւերով:

III

«Սկզբնական ակումուլացիայի» այդ գեղեցիկ իդիլիան կատարուում էր, ինչպէս գիտենք, ֆէօդալական պետութեան սիրասուն հովանու տակ: Ժամանակի ընթացքում այդ պետութիւնը, որ այնքան նպաստաւոր էր սկզբներում accumulation-ի հերոսների համար, փոխանակ նպաստելու արդիւնագործական ոյժերի վարձացման, խոչընդոտ հանդիսացաւ նրանց համար: «Սկսուեց սոցիալական յեղափոխութեան դարեշրջանը» *)— հասունացած ու ամրապնդուած նոր «տնտեսական ստրուկտուրը» ժայթքեց հրաբուխի նման և օդը ցնդեցրեց իր վրայ ծանրացած ու կապարի նման իրան ճնշող հին, ֆէօդալական «իրաւական վերնաշէնը»: Ծնունդ առաւ ժամանակակից բուրժուական պետութիւնը, որը միանգամայն փոխեց իրերի դրութիւնը: Նա ստեղծեց նոր, աւելի լոյեալ ձեւերը տնտեսական վարձացման համար: Նա իրագործեց բուրժուական լիբերալիզմի «ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն» հնչող երեք նշանաբաններից մէկը— «ազատութիւնը»... շահագործութեան համար— և աւելորդ դարձրեց այն բռնի միջոցները, որ գործադրում էր մինչև այդ՝ ֆէօդալական պետութիւնը: Տնտեսական վարձացումը առաջ դնաց աներկակայիլ արագութեամբ: Մանր արդիւնաբերութեան անկումը և գիւղերի դիֆ-

*) Ibid.

Ֆերենցիայի պրոցեսսը այնպիսի ահաւոր չափեր ընդունեցին, որ խոշոր արդիւնաբերութիւնը, չնայած իր հսկայական ծաւալման, չէր կարողանում կլանել իր մէջ ահագին մասսաներով պրոլետարականացող ազգաբնակչութիւնը: Եւ որքան առաջ էր գնում տնտեսական զարգացումը, որքան լայնացնում էր իր տիրապետութեան շրջանը կապիտալիստական արդիւնաբերութիւնը, այնքան աւելի ու աւելի աճում ու ստուարանում էին պրոլետարիատի շարքերը:

Ներկայումս եւրոպական համարեա բոլոր երկրներում պրոլետարիատը կազմում է արդէն ազգաբնակչութեան անագին մեծամասնութիւնը: Դրա մասին վկայում են այդ երկրների վիճակագրութիւնը:

Մենք գիտենք արդէն, որ պրոլետարիատի դասակարգային յատկանիշն այն է, որ նա սեփականութիւն չունի և ապրում է միայն իր աշխատավարձով:

1895 թուին Գերմանիայի ազգաբնակչութիւնը համաձայն պետական ստատիստիկայի կազմել է մօտ 51 միլիօն հոգի: Այդ թւում եղել են՝

Աշխատավարձով ապրողներ—28,757,058=55,550/0

Ջրաւոր սեփականատէրեր — 6,492,384=12,540/0

Միջին կարգի սեփականատէրեր—15,874,600=30,660/0

Խոշոր կապիտալիստներ և

հողատէրեր

— 646,242= 1,250/0

Այդպիսով, Գերմանիայի ազգաբնակչութեան մեծագոյն մասը, 55¹/₂ տոկոսը, բոլորովին պրոլետարականացած է: 12¹/₂ տոկոսը կազմում են ջրաւոր սեփականատէրերը, այսինքն այնպիսիները, որոնց սեփականութիւնները այնքան խղճուկ են, որ նրանք հարկադրուած են սովից չմեռնելու համար դիմել կողմնակի աշխատանքների: Դրանք էլ ուրեմն կիսով չափ օգտւում են աշխատավարձից, կիսով չափ պրոլետարիատներ են: Պրոլետարիատները և կիսապրոլետարիատները կազմում են միասին ազգաբնակչութեան 680/0, այսինքն աւելի քան 2/3 մասը: Այդ վիճակագրութիւնը կազմուել է 10 տարի սրանից առաջ: Ներկայումս արդէն իսկական պրոլետարիատների թիւը կազմում է Գերմանիայի ազգաբնակչութեան առնուազն 2/3 մասը: Մասնաւորապէս Պրուսիայում, որ կազմում է աւելի քան Գերմանիայի կէսը, աշխատավարձով ապրողների թիւը հաւասար է եղել 63,20/0-ի, սեփականատէրերի թիւը—36,80/0-ի:

Փրանսիայում սեփականատէրերը կազմում են ազգաբնակչութեան 44,60/0, մնացած 55,40/0—բանւորներ են, սեփականազուրկ պրոլետարներ: Այդ 44,60/0 սեփականատէրերի կէսից ա-

ւելին, մօտ 10 միլիոն հոգի, գիւղացիներ են: Դրանցից 5 միլիոնը այնքան աղքատ են, որ իրանց գոյութիւնը պահպանելու համար հարկադրուած են ծառայելու հարուստ հողատէրերի մօտ, և ուրեմն նոյնպէս աշխատավարձ են ստանում:

Աւստրիական վիճակագրութեան մէջ դասակարգելը բաժանում են այսպէս *).

Ինքնուրոյններ (Selbständige) — 3.841,640

Պաշտօնեանեաններ (Angestellte) — 539,117

Բանուորներ (Arbeiter) — 8.084,714

Օրավարձով աշխատողներ (Tagelöhner) — 1,102,656

Այստեղ ինքնուրոյնների թիւում հաշուած են ոչ միայն կապիտալիստները, հողատէրերը, առհասարակ սեփականատէրերը, այլ նաև սեփականատէրի խոշոր պաշտօնեաները, գիրեկտորները և այլն: Երկրորդ կարգին պատկանում են բոլոր հասարակ պաշտօնեաները, ծառայողները, որոնք 3-րդ և 4-րդ կարգերի հետ միասին կազմում են աշխատավարձով ապրող ազգաբնակչութիւնը: Ամեն մի 100 աշխատելու ընդունակ (Erwerbsthätig) մարդկանցից՝ սեփականատէրերի թիւը կազմում է այդ ստատիստիկայի մէջ 28, 3 սեփականատէրի, և աշխատավարձով ապրողների թիւը՝ 71, 7: Այս վերջինները կազմում են ուրեմն շատ աւելի, քան $\frac{2}{3}$ մասը:

Նոյնը մենք տեսնում ենք Շվեյցարիայում, Բելգիայում*) և այլն:

Անգլիայի վերաբերմամբ ընդհանուր վիճակագրական տեղեկութիւններ չկան, բայց յայտնի է, որ Անգլիան ներկայումս տնտեսապէս ամենազարգացած երկիրն է Եւրոպայում: Գիւղական ազգաբնակչութիւնը, որ կազմել է Անգլիայում, մի 100 տարի սրանից առաջ, ամբողջ ազգաբնակչութեան 76⁰/₀-ը, այժմ կազմում է ընդամենը 13⁰/₀: Մինչդեռ Գերմանիայում, վերջին պետական վիճակագրութեան համաձայն, գիւղատնտեսութեան մէջ զբաղուած պերսօնալը կազմում է 51⁰/₀: Յայտնի է որ Անգլիայում վաղուց արդէն անյայտացել է վերջին գիւղացին, այսինքն գիւղական մանր սեփականատէր-արդիւնաբերողը: Հողագործութիւնը, ինչպէս և գիւղատնտեսութիւնը առհասարակ, դարձել է ամբողջովին խոշոր կապիտալիստական արդիւնաբերութիւն և ոչնչով չի տարբերում ինաստիճակական արդիւնաբերութիւնից: Պարզ է, որ այստեղ պրոլետարներին թիւը պէտք է անհամեմատ աւելի լինի, քան եւրո-

*) Conrad — «Handwörterbuch der Staatswissenschaften, B. 2., Berufsstatistik.

*) Ibid

պական մայր-ցամաքի երկրներում: Այդ ցոյց են տալիս մեզ անգլիական արդիւնաբերութեան առանձին ճիւղերի վերաբերմամբ եղած վիճակագրութիւնները:

Ընդհանուր առմամբ կարելի է ուրեմն ասել, որ ներկայումս ներդրական համարեա ըլլող երկրներում պրոլետարիատը կազմում է ազգաբնակչութեան առնուազն $\frac{2}{3}$ մասը:

IV

Յայտնի է, որ պրոլետարիատը,—նոյնը կարելի է ասել ի հարկէ, և միւս դասակարգերի վերաբերմամբ,—բաժանուած է ներքուստ մի քանի խաւերի, որոնք տարբերուած են միմեանցից իրանց կացութեամբ, իրանց հոգեբանութեամբ և իրանց անմիջական, առօրեայ շահերով: Պրոլետարիատի ամենաբնորոշ տարրը, նրա ռազմական առաջապահը, կազմուած է գործարանական, կամ ինդուստրիական պրոլետարիատը: Յետոյ գալիս են՝ մոտաւոր կամ ինտելիգենտ պրոլետարիատը, առևտրական պրոլետարիատը, գիւղական պրոլետարիատը, տնային ծառաները, պետական և հասարակական հիմնարկութիւններում ծառայողները ևայլն:

Այդ բոլորին միացնողը, ինչպէս գիտենք, նրանց լայն, դասակարգային շահերի նոյնութիւնն է ներկայ հասարակութեան մէջ—այն, որ նրանք բոլորն էլ զուրկ են տնտեսական ապահովութիւնից, ապրում են աշխատավարձով և բոլորն էլ շահագործուած են սեփականատէր դասակարգերի կողմից:

Կանգ առնենք մի վոքը այն խնդրի վրայ, թէ ինչպէս է կայանում և ինչպիսիք է պայմանաւորուած այդ շահագործութիւնը:

Մենք գիտենք, որ բանուորը այն ժամանակ է գալիս ծառայելու կապիտալիստի մօտ, երբ նա զրկուած է իր սեփական հողից և արդիւնաբերութեան գործիքներից: Նա այդ ժամանակ ոչինչ չունի, բացի իր բանուորական ոյժից, որը նա, սովորած հիմնելու համար, ապրանք է դարձնում և գալիս է ծախելու իր այդ միակ ապրանքը գործարանատիրոջ: Պարզ է, որ բանուորական ոյժի գնահատութեան չափը կախուած կը լինի այդպիսի պայմաններում գործարանատիրոջից, կամ առ հասարակ գործատուներից (Arbeitgeber): Մենք ասացինք վերև, որ ներկայումս ազգաբնակչութեան պրոլետարականացումը այնպիսի չափեր է ընդունել, որ գործարաններում և առհասարակ արդիւնաբերութեան մէջ չեն կարողանում գործադրութիւն

գտնել բոլոր ազատ ոյժերը՝ Մեքենաները, շոգին, էլէկտրակա-
նութիւնը, XIX-րդ դարի այդ վիթխարի արդիւնազործական ոյ-
ժերը, մի կողմից նպաստելով խոշոր արդիւնաբերութեան յաջող
մրցմանը՝ արագացնում են մանր արդիւնաբերութեան անկումը
և ստուարացնում այդպիսով «թռչունի նման ազատ» մարդկանց
թիւը, միւս կողմից՝ աւելի ու աւելի մեծ չափերով իրանք փո-
խարինում են արդիւնաբերութեան մէջ մարդկային բանուորա-
կան ոյժը։ Այդպիսով, աշխատող ձեռքերի պահանջը յետ է մը-
նում նրա առաջարկից, և վաճառանոցը լցւում է բազմաթիւ
անգործ մարդկանցով, որոնք կազմում են Մարքսի ասած պա-
հեստի զոնդը (Reservearmee)։ Սուլամա հլինկու համար այդ
մարդիկ պատրաստ են աշխատելու ամենաանշան վարձա-
տրութեամբ, և օգտուելով այդ հանգամանքից, գործատուները
ձգտում են իջեցնել աշխատավարձի նորման մինչև նրա մինի-
մումը, այսինքն մինչև այն գումարը, որքան անհրաժեշտ է,
որ բանուորը կարողանայ պահպանել իր գոյութիւնը և ոյժ
ունենայ աշխատելու կապիտալիստների համար։ Ժամանակա-
կից բանուորական շարժման, կամ բանուորի դասակարգային
կռուի անմիջական նպատակներից մէկն է՝ դիմադրել որքան
կարելի է կապիտալիստների այդ ձգտմանը, կապիտալիստա-
կան արդիւնաբերութեան այդ բնական, պատմական տենդեն-
ցիային։ Բայց որքան էլ ուժեղ կազմակերպուած լինի բանուոր
դասակարգը, որքան էլ յաջող լինի նրա կռիւը, նա չի կարող
ներկայ հասարակութեան մէջ այնքան բարձրացնել աշխատա-
վարձը, որ վերջ դրուի պրոլետարիատի շահագործութեանը։
Կապիտալիստը գործարան է հիմնում և հնարաւորութիւն է
տալիս բանուորներին իր գործարանում, իր արդիւնաբերական
գործիքների (մեքենաների և այլն) միջոցով՝ աշխատել և ապ-
րանքներ պատրաստել։ Այդ ապրանքները նա ծախում է և
ստացած արժէքի մի մասը տալիս է բանուորներին, — այնքան,
որքան անհրաժեշտ է նրանց գոյութիւնը պահպանելու համար։
Մնացածը, բացի այն ծախքերից, որ նա անում է մեքենաների
վրայ և բենտ է վճարում հողատէրերին, նա դնում է իր զբը-
պանը։ Բանուորների արդիւնաբերած ապրանքների արժէքի
այն մասը, որ չեն ստանում իրանք բանուորներ, այլ իւրա-
ցնում են կապիտալիստներն ու հողատէրերը, կազմում է այն,
ինչ որ, ըստ մարքսիստական տերմինոլոգիայի, կոչւում է յաւել-
եալ արժէք (Mehrwert)։ Եթէ չլինէր այդ յաւելեալ արժէքը,
կապիտալիստները երբէք գործարաններ չէին հիմնի։ Իսկ եթէ
գտնուէր մի այնպիսի բացառիկ բարեսիրտ կապիտալիստ, որը
չուզենար օգտուել յաւելեալ արժէքից և վճարէր բանուոր-

ներին այնքան, որքան նրանք արդիւնաբերում են, նա չէր դիմանայ մրցմանը, կը սնանկանար ե նորից փողոց կը շարժէր իր բանուորներին: Ահա այդ մտքով ենք ասում, որ ներկայ հասարակութեան մէջ, որը հիմնուած է մասնաւոր սեփականութեան և ազատ մրցման վրայ, երբէք չէ կարելի վերացնել շահագործութիւնը: Ընդհակառակը, մենք տեսնում ենք, որ բոլոր կապիտալիստական երկրներում, քանի գնում՝ յաւելեալ արժէքի նորման, ուրիշ խօսքով՝ բանուորների շահագործութեան աստիճանը աւելի ու աւելի բարձրանում է: Անգլիական բանուորների ստացած աշխատավարձերի ընդհանուր գումարը՝ 1860 թուականից մինչև 1874, կազմելիս է եղել միջին թուով ամբողջ ազգային եկամուտի 45 տոկոսը, մինչդեռ յետոյ, 1877-ից մինչև 1891-ը, նա կազմել է միայն 42²/₃ տոկոս: Յաւելեալ արժէքի ամբողջ քանակը, որ ստացել են կապիտալիստները, 1860 թուականին 320 միլիոն մարկով պակաս է եղել աշխատավարձերի ընդհանուր քանակից: Իսկ 1891 թուին նա արդէն ոչ միայն պակաս չի եղել, այլ ընդհակառակը գերազանցել է 1,600 միլիոն մարկով: Այս թուերի համեմատ, յաւելեալ արժէքի նորման, ուրիշ խօսքով, ինչպէս ասացինք, բանուորների շահագործութեան աստիճանը, յիշուած ժամանակամիջոցում, 96 տոկոսից բարձրացել է մինչև 112 տոկոս: Այս թուերը վերաբերում են անգլիական տրէդ-իւնիօններում կազմակերպուած բանուորներին: Չկազմակերպուած բանուորական մասսաների վերաբերմամբ շահագործութեան աճեցողութիւնը անհամեմատ աւելի ուժեղ է:

Բանուոր դասակարգի տնտեսական թշուառ վիճակը քայքայում է բանուորական ընտանիքը և հարկադրում է նաև բանուորի կնոջը և երեխաններին կապիտալիստին ծառայել: Դրա հետևանքը լինում է այն, որ պահեստի գունդը՝ աւելի ևս մեծանում է և աշխատավարձի նորման էլ աւելի ընկնում: Եթէ մինչև այդ, բանուորին վճարելիս՝ կապիտալիստը աչքի առաջ էր ունենում մասամբ բանուորի ընտանիքը, որովհետև նրան անհրաժեշտ է, որ այդ ընտանիքը գոյութիւն ունենայ և բանուորների նոր սերունդներ մատակարարէ արդիւնաբերութեան համար,—այժմ, երբ այդ ընտանիքի անդամները իրանք արդէն սկսում են աշխատել, նա վճարում է բանուորին միայն այնքան, որքան անհրաժեշտ է նրա անհատական գոյութեան համար: Այդպիսով ամեն մի նոր բայլ, ամեն մի նոր երևոյթ տնտեսական կեանքում (ինչպէս ներկայ դէպքում կանանց և երեխաների մասնակցութիւնը արդիւնաբերութեան մէջ)—ծառայում է ներկայ պայմաններում, քանի դեռ տիրում է մաս-

նաև որ սեփականութիւնը, յօգուտ կապիտալիստների և ի ֆինաս պրոլետարիատի:

Այդ բանը չեն ուրանում, իհարկէ, և չեն կարող ուրանալ մինչև անգամ բուրժուական գիտնականներն ու քաղաքագէտները: Դեռ Գլադստոնը իր պարլամենտական ճառերից մէկում ասել է ժամանակակից տնտեսական զարգացման մասին հետևեալ նշանաւոր խօսքերը, որ բերում է «կապիտալի» յառաջարանում. «Ոյժի և հարստութեան այդ առասպելական աճումը տեղի է ունենում ամբողջովին յօգուտ ունևոր դասակարգերի»:

Պետերբուրգի յայտնի պրոֆեսոր Իւանիւկովը, որ քաղաքատնտեսութեան պատմական շկոյայի ներկայացուցիչն է Ռուսաստանում, քննելով «ազատ մրցութեան սխտեմի» բացասական կողմերը, վերջացնում է իր խօսքը հետևեալ տողերով.

«Ներկայումս ահագին քանակութեամբ կուտակուած վիճակագրական հետազօտութիւնները պարզել են հասարակութեան համար այն թշուառ պայմանները, որոնցում ապրում են բանուոր դասակարգերը: Եւ որ ամենից ուշագրաւը այդ ուսումնասիրութիւնների մէջ, այն է, որ պատմութեան մէջ օրինակը չունեցող ազգային հարստութեան աճումը XIX դ. ընթացքում դնում է ամբողջովին յօգուտ ունևոր դասակարգերի և միայն աննշան ազդեցութիւն է ունենում բանուոր դասակարգերի վիճակը լաւացնելու վրայ»:

Ս. Շ.

(Վերջը յաջորդ համարում)